

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/11

26 հունվարի 2018թ.

Քննարկվեց ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 22.12.2017թ. Ա/Ձ Մհեր Ազոյանի 10.11.2017թ. վարչական բողոքը բավարարելու վերաբերյալ թիվ 02/12 որոշման պահանջները կատարելու հարցը՝ կապված նոր վարչական ակտ կայացնելու հետ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հանձնաժողովի 17.10.2017թ. նիստում քննության է առնվել Ա/Ձ Մհեր Ազոյանի գանգատները ԵՏՄ անդամ չհամարվող պետությունից ավտոտրանսպորտային միջոցի ներմուծման հետ կապված առաջացած ԱԱՀ-ի գծով պարտավորության վերաբերյալ: Արդյունքում ընդունվել է 57/3 որոշումը, որի համաձայն Ա/Ձ Մհեր Ազոյանի գանգատները մերժվել են:

Ա/Ձ Մհեր Ազոյանը համաձայն չլինելով Հանձնաժողովի 17.10.2017թ. թիվ 57/3 որոշման հետ, այն բողոքարկել է ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով:

Հանձնաժողովի 17.10.2017թ. թիվ 57/3 որոշման դեմ Ա/Ձ Մհեր Ազոյանի կողմից բերված բողոքի քննության արդյունքում ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի կողմից 22.12.2017թ. կայացվել է թիվ 02/12 որոշումը, որի համաձայն Ա/Ձ Մհեր Ազոյանի 10.11.2017թ. վարչական բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Հանձնաժողովի 17.10.2017թ. թիվ 57/3 որոշումը, ինչպես նաև հանձնարարվել է Հանձնաժողովին կայացնել նոր վարչական ակտ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 22.12.2017թ. թիվ 02/12 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ա/Ձ Մհեր Ազոյանի բողոքը բավարարել:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչությանը.

Ա/Ձ Մհեր Ազոյանի կողմից ներմուծված «Միթսուբիշի L200» մեքենայի մաքսագերծումը կատարել՝ կիրառելով մինչև 01.01.2018թ. գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի որոշումները:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ